



Մ Ի Օ Մ

ՏԱՍՆԵՐՈՐԻ ՏԱՐԻ
ԹԻԻ 12.

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ԳԵԿՏԵՄԲԵՐ 31
1875.

Ա.Զ.Գ.Ա.ՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

Կ Ր Թ Ա Ր Ա Ն

Ա.Ի.ԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԲԱՆԻՑ

Դ Ա Ս Է.

Տ Ա Ճ Ա Ր Ի Բ Ա Ր Ե Ր Ը

«ՏԼԱՆՆԵՐ զայդ ամենայն ու Մար. ԻԳ. 2.
Մարթ. ԺԳ. 2. Դ. 1. ԻԱ. 6.»

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ այն խօսքն մի յանգլիմանական խօսք է. բայց չէ գառնն, այլ ծանր և ազգու։ Աշակերտներն Յիսուսի հետ Տաճարն կը մըտնեն, շինութեան գեղեցիութենէն, շքեղութենէն և հայտնապարտութենէն կը յափշտակին, սակայն նոր չէր, որ կը տեսնէին զայն, և ըստ թեամբ զար-

մանայն բաւական չը համարելով կը հարցափորձեն իրենց Վարդապետն, կը հրատարակեն, սրպէս զի նա եւս իրենց պէս զարմանայ, նշմարել տալով, որ այս շէնքն զարդարուած է գեղեցիկ քարերով եւ աշտարակներով։ — Յիսուս փոխանակ նոցա հետ զարմանալու, ՚ի սրատախտանի նոցա հարցման,

այսպէս կ'ասէ . « Այդ շինուածքին կը նայիք . — Տեսանէք զայդ ամենայն . եկեացեն առաքելք՝ յորս ոչ թողցի այդ քար ՚ի քարի վերայ , որ ոչ քակտեցի » :

Եթէ կամենանք աշակերտներն արդարացնել այսպէս պիտի տեսնիք . — Եթէ նոքա , որք տաճարն շինեցին եւ գեղեցիկ քարերով ու նուէրներով զարդարեցին , մեղաւոր չ'են , աշակերտներն եւս առաւել մեղաւոր չ'են նոցա ձեռակերտին վերայ զարմանալով : Առաջին խնդիրն այս է , որ իմանամք թէ պատշաճ էր արդեօք , որ սոյն շինքն գեղեցիկ լինի . եթէ գեղեցիութեան պատշաճաւորութիւնն ընդունինք՝ զարմանալն նորա հետեւանքն է . վասն զի գեղեցիկն շինուած է արդէն զգալու եւ զարմանալու համար : Գեղեցիութիւնն զգալն , գեղեցիութեան վերայ զարմանալն այնչափ բնական է , որ սոյն տպաւորութեանն դիմադրելն անկարելի է : Սոյն տաճարի շէնքն զարդարուած էր ամենայն ճարտարութեամբ . բան մի զանցառութեան սրբուած չէր . այնպէս որ տակաւին ներս չը մտած՝ սոյն սրբաւայրի սեմէն իսկ մտրդ կը յափշտակուէր եւ կը սրանչաւնար : Կարող ենք ասել , որ Մեծին Հերովդէսի ձեռքով շինուած սոյն տաճարն , որ Զօրաբարեկի շինած տաճարի տեղւոյն վերայ էր , թէ մեծութեամբ , թէ շքեղութեամբ եւ թէ փառաւորութիւն կը գերազանցէր ոչ միայն երկրորդ , այլ նոյն իսկ առաջին տաճարէն անգամ : Տաճարն շինուած էր երեք տափարակներէն ամենէն բարձրագունի վերայ , որոնք միացած էին իրարու հետ ընդարձակ աստիճաններով եւ սիրուն գաւիթ մի կը ձեւացնէին երկկարգ եւ եռակարգ սիւներով : Սոյն միաւորուած սիւնադարգ գաւիթներու վերայ կ'երեւէր սրբաւայրի իսկական գաւիթն :

Այս վերջին գաւիթի անտառ անման սիւներու մէջէն անցնելով կը մտնէին տաճարի մէջ , որոյ հարիւր կանդուն բարձր պատերն եւ նոյնչափ լայն շրջապատն թանկագին մարմարիսնէ էին , որ կը փայլէր եւ կը փոզվողէր իրեւ սակի շողողուն : Սրբաւայրին կը շրջապատէին կողմնակի շէնքեր , յանկաւորութեամբ , երրակի յարկերով , եւ աւելի մեծութիւն կը տային տաճարէին :

Այսքան մեծութիւն , այսքան շքեղութիւն , որոյ լոկ նկարագրութիւնն կը յափշտակէ զմտրդ , միթէ կարո՞ղ էր չ'ազդել աշակերտաց երեւակայութեան վերայ . եւ միթէ պիտի չը ներէի՞նք մենք , երբ կ'աղաղակեն . Վարդապետ , տես թէ ի՞նչպիսի քարեր են . ի՞նչ նուէրներ եւ սրպիսի շինուած :

Թողունք հին տաճարի նկարագրութիւնն եւ ներկայի վերայ խափնք : Ո՞ր քրիստոնեայն է , որ չը զարմանար , երբ կը մտնէ մի հոյակապ եկեղեցւոյ մէջ , որ զարդարուած է ամենայն շքեղութեամբ եւ փառաւոր ու հմուտ ճարտարապետութեամբ : Թէպէտ շինողներն մեռած են , բայց գոզցես կը խօսին տակաւին , գոզցես իրենց խորհուրդն ու մտածութիւնն միացած է իրենց ձեռակերտին հետ . գոզցես նոցա աստուածպաշտութեան շունչն կը շնչի յամենուստէք եւ կը քարոզուի գալուց ՚ի դարս : Ո՞ր քրիստոնեայն է , որ այս ամենն տեսնելով չ'ասէ իր մերձաւորին՝ աշակերտաց նման . տես ի՞նչ գեղեցիկ քարեր են եւ ի՞նչ գեղեցիկ շինուած . եւ զայս ասելով չ'ենթարկէ զինքն Տիրոջ յանդիմանական խօսքին . « Այդ քարերու եւ շինուածի գեղեցիութեանն կը նայիք » :

Երբ մեր հոգին մերնայուածքէն աւելի հեռի չերթար , երբ մեր հոգին կանգ կ'առնուէր այն տեղ , ուր մեր նայուածքն ստիպուած է կանգ առնուլ , երբ արտա-

քին նշաններն կամ նշանակներն, ձեւերը
 ընդհանուր անունն իրերն մեր հոգին կը
 գերեն, երբ արուեստի շքեղութիւն
 ներն մեր սիրան երկրի հետ կը կապեն՝
 փոխանակ դէպ ՚ի երկինքն բարձրանա
 լու. միով բանիւ երբ մեր հոգին մեր
 նայուածքէն առաւելութիւն չունի,
 միթէ Յիսուս Քրիստոս յանդիմանելու
 իրաւունք չունի : Այս պատճառաւ
 էր, որ Յիսուս Քրիստոս յանդիմանեց
 իւր աշակերտներն : Նա կարգաց նու
 ցա սիրան ու մտքն, նա տեսաւ նու
 ցա հոգւոյն մէջ ցանկութիւն մարմ
 նոց, ցանկութիւն աչաց և հոգարու
 թիւն կենաց, որոնք մթութեան երեք
 շղթաներ են, որովք Աստուծոյ թըշ
 նամին պինդ կը կապէ զմեզ արտաքին
 խաւարի հետ : Յիսուս կը տեսնէր որ
 աշակերտաց զարմացման մէջ, աշակեր
 տաց բացառանջութեան մէջ հաւասար
 րացէս կը խօսէին մարդն և հրէայն :
 Մարդն՝ որ յափշտակուած էր ամեն
 բանով, ինչ որ կ'երեւէր և կ'արհա
 մարհէր, ինչ որ չէր երեւիր. Հրէայն՝
 որ կը պարծէր արտաքին շքեղութեամբ
 կրօնական սրաշտաման, որոց ներքին
 խորհուրդն, ներքին իմաստն փաղուց
 արդէն խաւստափած էին իւր սրտէն և
 մտքէն և ինքն յամառութեամբ կա
 պուած էր օրինաց հետ, այսինքն ըս
 տուերի հետ, և այս այն փայրկինին,
 յորում սոյն օրէնքն ամեն ժամանակէն
 աւելի ստուեր էր, վասն զի ամենայն
 ինչ լուսն առած էր գալտեամբ Յի
 սուսի Քրիստոսի : Ար տեսնէր ահա՛
 Յիսուս աշակերտաց հոգւոյն մէջ մար
 դըն իւր ցանկութեամբ և Հրէայն իւր
 պարծենկրտութեամբ, ուստի և կ'ա
 սէր. « Այս քարերուն և շինուածին կը
 նայիք : Ի՞նչ են այս քարերն, եթէ ոչ
 փոշոց եւ աւազի հատիկներ, որոնք
 այն պատճառաւ միայն մեծ կ'երեւին,
 որովհետեւ դուք փոքր էք : Ի՞նչ են այս

նուէրներն, որոնք կամ երկիւղիւ, կամ
 անափառութեամբ, եւ կամ սովորու
 թեամբ, բռնի կորզուած են այն հոգի
 ներէն, որոնք չը կամեցան զինքեանս
 Աստուծոյ նուիրել : Ի՞նչ է այս մար
 մարիոններու, ոսկեդրուագներու եւ
 այս ամեն զարդերու փայլուն պատ
 րանքն, որոց բարեպաշտական իմաս
 տըն վաղուց արդէն մոռցուած է : Այս
 անտի շքեղութեանց կը նայիք. այս է
 որ ձեր սիրան գրաւած և յափշտա
 կած է :

Բաց յայսմանէ մի պարագայ եւս
 կար, որ մասնաւորապէս պատահու
 թիւն կընծայէր Տիրոջ յանդիմանա
 կան խօսքերուն : Յիսուս ինքն ևս տա
 ճարէն ելնելով մի բան տեսած և ս
 շակերտներուն ցոյց տուած էր, որ ք
 առանց Յիսուսի և ոչ նայելու անդ սմ
 արժանի պիտի համարէին : Ի՞նչ էլ այս,
 եղբարք. ո՞վ էր, որ Յիսուսի նայուածքն
 ու ուշադրութիւն իւր վերայ գրաւած էր :

Սա էր մի աղքատ կին, որ ողոր
 մութեան գանձանակին մէջ ձգած էր
 մի լումաց, այսինքն ինչ որ ունէր եւ
 կարեւոր էր իրեն զայն կարօտելոց
 օգնութեան նուիրած էր : Յիսուս Քր
 իստոս նշմարել տուած էր իւր աշա
 կերտաց սոյն առատաձեռնութիւնն,
 որ, ըստ իւր դատողութեան, աւելի
 մեծ էր քան հարստութեան ամենա
 ռատ աուրքերն : Այն ինչ Յիսուս
 մարդասիրութեան սոյն սրտաշարժ օ
 ըինակն աշակերտաց աչաց ներկայացու
 ցած էր, և այն ինչ մի պարզ և աղ
 դու խօսքով մտածութեան գեղեցիկ
 նիւթ տուած էր աշակերտաց, ահա՛
 այս փափուկ ժամուն մէջ, և գողցես
 ՚ի պատասխանի Յիսուսի խօսքերուն,
 աշակերտք ևս կը հրաւիրեն իրենց
 Վարդապետն, որ իրենց հետ զարմա
 նայ տաճարի շքեղութեան վերայ : Որ
 պէս թէ կամին ասել իրենց Վարդա

պետին. — Գու զայն արժանի համարեցիր ուշադրութեանդ և մեք զայս արժանի համարեցինք մեր ուշադրութեան: Գու կը նայիս պարզ հոգւոյն, որ զինքն կը նուիրէ. իսկ մեք կը նայինք շքեղ քարերուն: Քո սիրամ տեսարանն է բարոյական մեծութիւնն ու գեղեցիկութիւնն. իսկ մեզ հաճելի տեսարանն է նիւթական գեղեցիկութիւնն ու մեծութիւնն: Հոգւով և ճշմարտութեամբ երկրպագութեան մի գործըն անգամ կը յափշտակէ, կը կորզէ զքեզ այս արտաքին պաշտաման փառաւորութենէն, որ կը կատարուի սոյն շրջապատին մէջ. իսկ զմեզ սոյն արտաքին շքեղութիւնն կը գրաւէ և մեր տեսութիւնն գերելով կը հեռացնէ այն հոգւով և ճշմարտութեամբ աստուածայաշատութենէն, որով միայն կը փառաւորի մեր Երկնաւոր Հայրն: Եւ ոչ միայն մեր բնադրումն կը ասնի կը հեռացնէ զմեզ այն կետէն, զոր դու կը նշմարես, այլ այնքան յափշտակուած ենք, որ նոյն իսկ քո ազդարարութիւններդ անկարող կը լինին դէպ ՚ի քո դիտած կողմն դարձնել զմեզ: Գու ստացիր, ահա այն բանին վերայ պէտք է զարմանալ. իսկ մեք կ'ասենք. ահա այս բանին վերայ կը զարմանանք:

Այս խօսքերուն, այս մտածմունքներուն էր, որ պատասխանեց Յիսուս. Այդ բանին կը նայիք. այդ կը զարմացնէ զձեզ: Տակաւին քանի՞ քանի՞ խօսքեր կարող էր յաւելուլ Յիսուս: Ո՞րչափ պատրաստի փաստեր ունէր, զորս, եթէ պատշաճ դատէր, կարող էր ՚ի կիր առնուլ և յանդիմանել թէ աշակերտաց ապշութիւնն և թէ նոցա գրաւումն ու սնտոյի զբաղումն: Բայց Յիսուս ոչ շատ խօսքեր կը սիրէր և ոչ փաստաբանել: Մի հասարակ խօսք, մի սպացոյց ՚ի միջոյ բազմաց, բաւական կը համարէր նա, բայց ՚ի հարկէ

այս մի խօսքն եւս միշտ վճռական էր և հատու, միշտ ուժգին էր և ազդեցիկ, միով բանիւ, ինչպէս առհասարակ ասուած է աստուածային խօսքերու համար, կը թափանցէր մինչեւ սրտի և մտքի յետին ծալքերն, մինչեւ ոսկրաց յոգերն եւ ուղեղն: Յիսուս մի խօսք միայն կ'ասէ ուրեմն, և ահա նոյն խօսքն. « Եկեսցեն աւուրք, յորս ոչ մնացէ սյդր. քար ՚ի քարի վերայ, որ ոչ քակտեսցի »:

Այս յիշուած քայքայումն, այս աւերն ու կործանումն յանկարծադէպ է, ուժգին և սուսալի: Սա այն աւերն է, զոր տարիներն ու դարերն կ'անեն անզգալի կերպիւ: Այս աւերումն այնպիսի մի թշնամոյ գործ պիտի լինի, որ ժամանակի թշնամութենէն, ժամանակի սպառումէն աւելի անհամբեր է: Եւ որովհետեւ ոչ դքի մտքէն չ'անցնիր, որ սոյն տաճարն քակուի այն ժողովրդեան ձեռքով, որ զայն կառուցած է, իրեն համար փառք ու պարծանք կը համարի և կ'ընդունի զայն իբրև վառարան ազգայնութեան, ուրեմն խօսքն մի այլ ժողովրդեան վերայ է, մի արչաւանաց և աշխարհաւիրութեան վերայ է: Այս միակ խօսքն իսկ կը բանայ աշակերտաց մտածութեան համար մի սոսկալի տեսարան նախատանաց, աւերածոյ և ահաւոր տառապանաց: Սոյն խօսքն թերեւ՛ս կը պարունակէ իւր մէջ Եբրայեցի անուան և ժողովրդեան սպառք պուռ ջնջման մարգարէութիւնն: Աստուածային մարգարէն մի կէտի վերայ միայն լռութիւն կը պահէ: Նա չք յայանէր թէ երբ պիտի պատահին այս բաներն: « Եկեսցեն աւուրք » կ'ասէ նա. բայց իսկոյն ազատ թուիլ տալով սոյն մարգարէութեանն, որ կ'եռայ իւր սրտին մէջ, նա խիստ լաւ կը հասկացնէ նոցա թախտեալ սրտերուն,

որ այս սողազան շատ հեռի չէ և սոյն Տաճարն, որ տակաւին առողջ է բոլոր յիշատակարանաց մէջ, քանզի յիսուն տարի չսկայ, որ շինուած է, այս Տաճարն այլ եւս յիսուն տարի պիտի չք տեսնէ :

Սակայն եթէ Տաճարի կործանումէն չ'ենթադրի անգամ երկրի աւերումն եւ ժողովրդեան սպառսպուռ ջնջումն, և եթէ այս բաներէն ոչ մին մօտաբուտ լինի, դարձեալ Յիսուսի Քրիստոսի ստոյգատասխանն չը կորուսանէր բնաւ իւր խնայան ու զօրութիւնն : Այն պէս ընդունինք, որ իբր թէ Տաճարն պիտի կործանի ոչ թէ յանկարծահաս սրատահարաւ, այլ յողով տարիներու լուռ և դանդաղ յաջորդութեամբ : Սակայն ճշմարիտ է դարձեալ, որ երբ կ'ասէ Յիսուս իւր ունկնդիրներուն (որոնք ինքեանք իսկ գիտեն որ այնպէս է) թէ պիտի գան օրեր, որ սոյն հօյակապ շինուածի քարն քարի վերայ պիտի չը մնայ, այս խօսքերով մեր Տէրն լիովին կ'արդարացնէ սոյն ծանր եւ քաղցր կշտամբանքն . « Այդ շինուածի մեծութեանն ու գեղեցկութեանն կը նայիք » :

Սքանչելի խօսք, որ իւր մէջ կը բովանդակէ ամեն ապացոյց : Յաւիտենականութիւնն ու ճշմարտութիւնն անբաժան են, ինչպէս և ստութիւնն ու խարիզութիւնն : Ինչ որ ճշմարիտ է՝ յաւիտենական է . իսկ ինչ որ յաւիտենական չէ, էութիւն չունի, այլ լոկ երեւոյթ և անուն : Ամեն ինչ որ կ'երեւի՝ Աստուած ստեղծած է չ'երեւցածներէն : Հոգին, որոյ վառարանն է Աստուած, յառաջ էր քան զնիւթն և էր առանց նիւթոյ : Նիւթն ստեղծուեցաւ միայն նորա համար, որ լինի գործի ստեղծեալ հոգւոյ, լինի ձեւ նորա կենդանութեան և առարկայ նորա գործունէութիւնն : Բայց նիւթն

բնաւ ներքին բուն և բացարձակ արժէք չունի : Նիւթն իւր ունեցած բոլոր արժէքն կ'ընդունի իւր նպատակէն և իւր կիրառութենէն : Հոգին միայն, որ բլխած է Աստուծոյ, որ նման է Աստուծոյ, որ ընդունակ է Աստուծոյ հետ միանալու, հոգին միայն է անմահ . վասն զի արժանի է անմահ լինելու : Մի հատ հոգին բովանդակ աշխարհ կ'արժէ, կամ աւելի պարզ ասենք, ոչ միայն բովանդակ ներկայ աշխարհս, այլ եթէ սորա նման ուրիշ շատ աշխարհներ եւս լինին, չեն կարող համեմատիլ և կշռուիլ մի հատ հոգւոյ հետ : Հոգին միայն արժանի է մարդոյ գլխաւոր ուշադրութեան . վասն զի նա Աստուծոյ գլխաւոր ուշադրութիւնն յինքն գրաւեց : Եւ քանի որ հոգին և ամեն ինչ որ հոգւոյն կը վերաբերին անտեսանելի են, կարող ենք ասել ճշմարտութեամբ, որ միայն անտեսանելի բաներն են արժանի զննութեան, և կերպիւ իւրիք, պէտք է խօսքաւ կոյր լինել միւս մնացած բաներու համար :

Եւ ահա՛ սոյս սրտաճառաւ այրի կնոջ լուման, որ առանց տղաղակի և հուշակի ողորմութեան գանձանակն ընկաւ, ուշադրութեան աւելի արժանի էր քան թէ Տաճարի զարդերն և քարերն : Այս մի լոկ լումայ չէր, այլ հոգւոյ մի աներեւոյթ շարժումն, որ կ'երեւէր ողորմութեան սոյն լումային մէջ : Այս ներքին շարժումն էր, որ մեծ էր գործէն, շատ մեծ էր նոյն իսկ Տաճարէն և Տաճարի ամեն շքեղութենէն, ամեն աստիճաններէն, գաւիթներէն, կամարներէն, հսկայածեւ սրտերէն և պարիսպներէն : Եւ ոչ միայն այսչափ, այլ բազմատուութեան առնուել անգամ անիրաւութիւն է : Աշակերտներն, եթէ կամենան, կարող են սոյն Տաճարն կառուցանող խորհուրդն համեմատել

այն խորհրդոյ հետ, որ այրի կնոջ ձեռքէն դանկն 'ի գանձանակն ձգել կրայ : Բայց աշակերտներն հեռի են այսպիսի համեմատութեան վերայ մըտածելէն : Եթէ մտածելն իսկ, մենք նոցա համեմատութիւնն պիտի ընդունէինք միայն այրի կնոջ գործն գովելու համար : Ասան զի այն պերճաւոր Իշխանն, որ իւր գանձուց աւելորդով կամ իւր հպատակաց յամբօրէն յասկի փոխարկուած քրտինքով կանգնեց սոյն Տաճարն, եթէ համեմատենք այս այրի կնոջ հետ, որ ծածկաբար մարգարութեան գանձանակի մէջ կը ձգէ « Ի կարտութենէ իւրմէ զամենայն զկեանքս իւր », ինչպէս կ'ասէ Յիսուս Քրիստոս, եթէ համեմատենք այս երկուսն, ինչ անհուն տարբերութիւն կը տեսնենք : Արչափ մեծ է այս ազբասայրին և արչափ փոքր է այս մեծ Իշխանն միահեծան :

Իւրաքանչիւր անհասի հոգւոյ մէջն է, որ պէտք է որոնել իւր մէն մի գործոց իսկական չափն ու ճշմարիտ անունն, կամ, այլապէս ասենք, հոգւոյ գործքերն են միայն ճշմարիտ գործքեր : Այս այն գաղտնիքն է մին է, որուն զգայական առարկայից տիրապետութիւնն չթողուր որ հասնինք առանց դժուարութեան եւ սակայն անհրաժէշտ պէտք է որ զգայական տիրապետութեանն յաղթենք և բարձրանանք դէպ 'ի հոգեկան գաղափարներն, եթէ կը փափայբինք կեալ ըստ ճշմարտութեան և ըստ Աստուծոյ : Մեր բացառիկ կերպիւ և յատկապէս գործ կ'անուանենք ամեն պաշտօն, զոր կը կատարէ մեր կամքն մեր ուժով կամ մեր մարմնաւոր կարողութեան միջոցաւ, որով մեզմէն արտաքոյ որ և իցէ փոփոխութիւն մի կ'արտադրի : Իսկ գործ չենք անուաներ, այլ մտածութիւն, խորհուրդ, զգացումն, իղձ և փափայք

այն ամենն, ինչ որ կ'անցնի մեր հոգւոյ մէջ, կամ ինչ որ կը կատարէ մեր հոգին առանց մարմնաւոր ուժոյ օգնութեան և առանց որ և իցէ փոփոխութիւն մի արտադրելու արտաքին աչխորհի մէջ : Յրինակի համար, երբ վճռական դիտաւորութիւններ կ'անենանք մենք և մեր կամքէն անկախ արգելքներով կատարումն կը խափանուի, մեք կը կարծենք որ բնաւ չք գործեցինք : Եւ սակայն սոյն դիտաւորութիւններն ոչ միայն գործքեր են, (վկայ այս բանիս մեր խիղճն, որ խոյն կը խայթէ զմեզ երբ վատ են), այլ իսկապէս կատարուած ճշմարիտ գործքեր են : Մեր արտաքին գործքերն միայն նշանակ և յայտնութիւն են ներքնայն և որտեղուն նայող և քննող գոտաւորի համար (յաչս որոյ արտաքին փոփոխումն կամ արտադրութիւնըն մեծ նշանակութիւն չունի) ոչ այլ ինչ են արտաքին գործքերն եթէ ոչ աւելի զորեղ կամ նուազ կերպիւ յայտնուած շարժումներ մարմնաւոր անդամոց : Մեր ոչ թէ պիտի դատուինք մեր նիւթական կամ արտաքին գործքերով, այլ մեր 'ի ներքուստ կամեցածներով — մեր հոգւոյ գործքերով : Ասան զի, չէ ասուած թէ մենք վարձ կամ պատիժ պիտի ընդունինք այն գործոյն համար ինչ որ մարմնով գործածենք, այլ ինչ որ մարմնոյ մէջ կամ հոգւով գործած ենք : Մեր արտաքին գործքերն ներքնայն ձեւերն են ու նըշակներն, յայտարարներն են ու վկայութիւններն : Եւ այս իմաստիւ է, որ չէ կարելի անտարբեր համարիլ այս ինչ կամ այն ինչ գործած գործն, վասն զի, նախ՝ այս մի ապացոյց է, որ մենք կամեցած ենք այս ինչ կամ այն ինչ բանն, և երկրորդ՝ որ 'ի ներքուստ ձեւեալ սոյն գործքերն լաւ կամ վատ ազդեցութիւն կ'ունենան անշուշտ

մեր ներքին մտորոյն վերայ, նայելով
այն գործոյ լուռ թեանն կամ վա-
տու թեանն : Բայց պարտինք իմանալ,
որ ամեն ժամանակ մեր ներքին գործն
է, որ պիտի դատուի, սիրան է, որ
պիտի քննուի : Եթէ այսպէս չը լինէր,
պիտի ասելնք ուրեմն թէ այն մտորոն,
որ ներքին կարողութիւններ ունի, բայց
արտաքին գործելոյ միջոցներէ զրկուած
է, պիտի չ'ենթարկուի դատաստանի .
և թէ՛ այն մտորոն որ իւր յղացած և
կամեցած բարին և կամ չարն կարողա-
ցած չէ գործ դնել, հաշիւ պիտի չը
տայ ուրեմն ո՛չ բարւոյն և ո՛չ չարին
համար : Եթէ այսպէս ենթադրենք,
այնուհետև կ'ոչնչանայ ամեն պատաս-
խանատուութիւն եւ ամեն բարոյա-
կանութիւն : Բայց այսպէս չէ : Մարդն
արտաքին գործքերն կը գատէ . իսկ
Աստուած ներքինն, այս իմաստիւ է
որ հասարակօրէն կ'ասեն՝ Աստուած սիր-
որն ի ըրապէ կամ սրբին ի ընայի : Եւ մէք
խեղճ մարդիկներս իսկ, միթէ մէք ևս,
ըստ մեր կարողութեան, սրտին չե՞նք
նայիր : Միթէ հարիւրաւոր անգամ
դատաստան չե՞նք արած՝ թէ այս ինչ
ոճրագործն պակաս յանցաւոր է (ըստ
որում ակամայ գործած է ինչ որ գոր-
ծած է) քան թէ այն ինչ պարզ յան-
ցաւորն, որ կամովին գործած է, ինչ
որ գործած է : Այսպէս ուրեմն, շա-
րունակելով գործ անուանիլ ինչ որ ա-
մեն մարդիկ կ'անուանեն, և հասարա-
կաց լեզուին մէջ իրարմէ որոշելով
գործն ու խորհուրդն կամ մտածու-
թիւնն, իրաւունք ունինք ասելու, որ
իսկապէս մեր կամաւոր խորհուրդներն
են մեր ճշմարիտ գործքերն . իսկ մեր
արտաքին գործքերն են միայն նշանակ-
ներ կամ յայտարարներ :

Աւելի ընդարձակենք այս իմաստն :
Ամենայն ինչ որ արտաքին է, տեսա-
նելի և նիւթական, միայն լոկ նշանակ

է : Ճշմարիտ գործքերն միայն հոգւոյ
գործքերն են : Հոգին է միայն որ խ-
կապէս կը գործէ : Իսկ այն փոփոխուած
ներն, որ արտաքոյ հոգւոյն կ'արտա-
գրին զպայարանաց միջոցաւ կամ զգա-
յարանաց աշխարհի մէջ, այդ փոփո-
խութիւններն միայն զհոգին կ'արտայայ-
տեն և ո՛չ այլ ինչ : Սորա գործքեր են
գարձեալ . չը զրանանք սոյն անունն
տալու : Բայց սորա լոկ նշանական կամ
երեւութական գործքեր են, սորա մեր
զգացումներու և կամեցածներու նը-
շաններն են, կամ մեր ներքին մտորոն
գործ դնելու և հրահանգելու միջոց-
ներ են, և այս բանիս մէջ է ասան ի-
րենց կարեւորութիւնն : Ինչ որ կը խօ-
սինք մեր գործոյ վերայ, նայն պէտք
է ասել նաև յմեզմէն արտադրած բա-
րի կամ չար բաներու մասին : Այս
արտադրութիւններով չենք համա-
րուիր մէք այն՝ ինչ որ ենք . նորա մի-
այն արտայայտութիւն են, միայն վը-
կայութիւն են մեր ներքինոյն, միայն այս-
քան է իրենց կարեւորութիւնն : Բայց
որպէս զի մէք նշանակի իրականու-
թեան հետ չը շփոթենք և ո՛չ նշանն՝
նշանակեալ իրին հետ խառնենք, ժա-
մանակն կը կործանէ յաջորդաբար սոյն
նշանակներն : Այս մասին բնաւ իմա-
յողութիւն չըկայ, նիւթն ենթակայ է
օրինաց նիւթոյն, հողն ՚ի հող կը դառ-
նայ . և մեր մարմինն, որ ո՛չ թէ մեր
էութիւնն է, այլ միայն մեր ձեւն
կամ արտաքին տեսիլն, մեր մարմինն
իսկ, որ երեւութական աշխարհի ա-
ռաջին մասն ու բաժինն է մեզ համար,
առաջին առարկայն և առաջին գործին
մեր արտաքին գործողութեան, այս
մարմինն անգամ կը փոփոխի, կը մաշի,
կը նուազի, կ'անկանի, եւ իւր տկար
և խախուտ յասկութեամբ իւր շա-
րունակ մահուամբ, ամեն վայրկեան
կը յիշեցնէ մեզ, որ մեր էութեան

կամ գոյութեան նկատմամբ, ստորա-
կարգեալ է ինքն և միայն պատշտճաւ
ւորութեան համար կարեւորութիւն
ունի :

Հեռի է մեզմէն այն յիմարտիան
ցնորքն , որով ոմանք յանգագնեցան
տարակուսանաց ենթարկել նիւթոյ
գոյութիւնն և արտաքին աշխարհի ի-
րականութիւնն : Հեռի է մեզմէն տի-
եզերաց սքանչելի երեւոյթներն առ
աջք տեսիլներ համարել : Բայց պէտք
է խոստովանիլ, որ կայ մարդոյ խղճին
մէջ մի բան , որ կը ստիպէ անբակ եւ
անբաժան կերպիւ միացնել գոյու-
թիւնն՝ դադարաբի հետ : Մեծ ատե-
նախօս մի ասած է . « Ինչ որ պէտք է
վերջանայ , հազիւ թէ ելած է ոչնչու-
թեանէ » : Այն որ չէ ստեղծուած յա-
րատեւելու համար՝ ինչ կերպիւ , ինչ
անուամբ կարող էր մնալ և աղբիլ :
Միթէ կը սխալի Ս . Գիրքն , երբ կ'ա-
սէ . « Ապաքէն որպէս 'ի պատկերի շրջի
մարդ » : Միթէ սխալած են այն հոգե-
խօս վարդապետներն , երբ մարդկանց
նայուածքն դէպ 'ի աներեւոյթ աշ-
խարհն դարձնելով՝ շարունակ քարո-
զած են , շարունակ ստիպած են զայն
միայն խորհիլ , զայն միայն սիրել , այ-
նու միայն կապիլ , ինչ որ էական է և
իրական , ինչ որ լսկ ստուեր չէ և ե-
րեւոյթ :

Ասենք համարձակ , որ , բառի կը-
րօնական իմաստիւ , մի միայն այն էա-
կան է և իրական , ինչ որ յաւիտենա-
կան է : Ամեն բան , ինչ որ կ'եղձանի ,
ինչ որ կը քայքայի , թէ՛ մեր շուրջ և
թէ՛ մեր մօտ (ընդ որս է և մեր մար-
մինն , որ մեզ մօտ է) բացարձակապէս
ոչինչ են , ստուեր անգամ չեն . վասն
զի ստուերն , թէ և ստուեր , դարձեալ
ինչ է : Ոչ ինչ են , ասացինք , այս ա-
մենն , և նշանակ անգամ չեն , վասն զի
նշանակն դարձեալ ինչ է : Աստուած

կամի , որ բնաւ չը խաբուինք այս բա-
ներով և ահա այս պատճառաւ է , որ
փոխախտութեան օրէնքն , առանց մեծ
գըրգոցի , կը կրճէ և կը կործանէ ահ-
ներեւ ամեն նշանակներ : Ամենէն սուրբ
նշանակներն իսկ կ'անհատին իրենց
կարգին : Այն Տաճարն իսկ , որոյ մե-
ծութեան և շքեղութեան վերայ կը
սքանչանային աշակերտներն , այն Տա-
ճարն եւս պիտի կործանէր : Վրէժ-
խընդիր անօրէնութիւնն աւելի պիտի
փութացնէր այս աւերման սոսկալի
կատարածն : Եւ ի՞նչպէս կարող էր չը
կործանել մարդկային ձեռքով բարձ-
րացած սոյն Տաճարն , մինչդեռ Աստ-
ուած , իւր ձեռքով շինուած տաճարի
համար անգամ կործանումն սահմա-
մանած է :

Տիեզերքն է առաջին ամենատուրբ
և ամենաշքեղ տաճարն 'ի մէջ ամե-
նայն տաճարաց : Այսպէս անուանել
Տիեզերքն՝ կը նշանակէ իւր յատուկ
անուան տալ , կը նշանակէ իրաւունք
տալ նորա գոյութեանն : Վասն զի ,
Տիեզերքն եթէ տաճար չէ , հապա ի՞նչ
է : Արդ՝ այս տաճարն իսկ , որոյ ճար-
տարապետն և հիմնադիրն ինքն Աստ-
ուած է , պէտք է քայքայի և աւերի .
քանզի Աստուած այսպէս վճռած է :
Երբ պղծուած է այն՝ ի՞նչպէս կարող է
մնալ : Նա , որ նոր Սամսոնն էր , (բայց
ամենայն սրբութեամբ հանդերձ , զոր
չունէր՝ հինն Սամսոն) և անկաւ Աստու-
ծոյ ժողովրդեան թշնամեաց ձեռքն , մի-
թէ կարող չէր իւր աստուածային
ձեռքով շարժել սասանել անհուն շե-
նուածոյն սիւններն և չը թողուլ իւր
անմեղ կեանքն Տիեզերաց փլատակնե-
րուն ներքեւ : Նա այսպէս չ'որաւ .
այլ միայն կործանման արհաւիրներ
եւ նշաններ երեւեցան , որպէս զի
մարդկութիւնն սթափի և հասկնայ
թէ՛ նոյն իսկ երկիրն , իւր բնակիչներով

հանդերձ, ոչ բրնձեմամբ միայն կեայ, սասանեցան երկիր և երկիրք, բայց հաստատեցան վերտոխն տնտեսով և շարունակեցին տնտեսել թէ ինչպէս օրերն քիչերնեքուն և գիշերներն օրերուն կը յաջորդեն. ինչպէս ծովն կը ծփայ, կը լեռնանայ և կը գաշտանայ աստեղաց ազդեցութեան տակ, և թէ ինչպէս աստեղք իսկ երկիրին մէջ կը կատարեն իրենց սովորական ջրածնն, Բայց գատավճիռն յայտարար է միայն: Երկիրն, իրրեւ ընդարձակ ծովու մէջ վառուած մի թշուառ նաւ, պէտք է իւր ընդարձակ նաւագնացութեան մէջ անհետի բացերուն և փոթորիկներուն մէջ և ինքն եւս գիտի և փոշի գառնայ, այնքան գիտիներ և փոշիներ կրանելէն եւ իւր մէջ խորածուղելէն շինի և պէտք է մնայ իրրեւ մի յաւիտենական տնտեսան տնտես յիշատակ այն երկնային հոգիներու յիշողութեան մէջ, որոնք նորա ծննդեան ներկայ գտնուեցան և վախճանն տեսին: Ի՞նչ կ'աւետ, այս տաճարն իսկ, իւր շարժուն և յոգեւոր ճարտարապետութեամբ, ուր շատ փոքր տեղ կը գրաւէ երկիրն, այս տաճարն իսկ պէտք է գլխավին խորատուր բոցերու ավիւրանասին մէջ, որ պէս զի այսպիսի մի գիւրին և արագահաս կատարած գրոշմէ և տղաւորէ ամեն սանդղեալ հոգիներու վերայ աստուածային տեսչութեան այս յաւիտենական սկզբունքն — Ն Ի Թ Ն Հ Ո Գ Ի Ո Յ Հ Ա Մ Ա Ր, Ի Ս Կ Հ Ո Գ Ի Ն Ճ Մ Ա Ր, Տ Ո Ի Թ Ե Ա Ն Հ Ա Մ Ա Ր Ե Ի Ա Ս Տ Ո Ի Ծ Ո Յ Հ Ս Մ Ա Ր:

Այսպէս ուրեմն, ինչպէս այն տաճարի, նոյնպէս և միւս տաճարի քարն քարի վերայ պիտի չը մնայ: «Այս բանին կը նայիք դուք ուրեմն»: Եւ արդարեւ՝ եթէ այն բանին նայելու չէ, ինչ որ պէտք է եղծանի, միթէ նայե-

լու է աշխարհին, որ պիտի կործանի և խաղաւ կորնչի:

Ո՛վ համբերատար հետազոտիչներ գաղանեաց բնութեան, կ'ուզե՞ք արդեօք գատարարաւ զձեզ — Ո՛չ բընաւ. եթէ նիւթի մէջ հոգի կ'որոնէք. եթէ ՚ի միջո տեսանելոյն գտնուան կը զննէք, և եթէ տիեզերաց մէջ տիեզերաց Արարչին կը նայիք, ՚ի հարկ է անգատարարաւ չէք. բայց եթէ այսպէս չէ, անշուշտ Յիսուս Քրիստոս ձեզ եւս կ'աօէ, ինչ որ աշակերտացն ասաց. «Այդ արտաքին մեծութեանն ու գեղեցիկութեանն կը նայիք»: Ես կը փոփոքիմ, ո՞վ հետազոտիչք բնութեան, որ ձեր զարմացումն աւելի խոհուն լինի և ձեր հետազոտութիւնն աւելի գիտնական: Բայց ի՞նչ օգուտ, եթէ ձեր հետազոտութիւնն կէս ճանապարհին կանգ առնու և ձեր զարմացումն պատրի առարկաներով: Համամիտ եմ ես, որ դուք զննէք այն ինչ որ կը զննէք. բայց նայելու և զննելու է վերէն և ո՛չ թէ վարէն: Մարդիկ ամենայն ինչ վատ կը տեսնեն և կամ աւիտեան կերպիւ կը տեսնեն, երբ Աստուծով և յԱստուած չ'են տեսներ: Բնութեան հրաշքեաց մէջ ի՞նչ բանի վերայ կը զարմանաք դուք, եթէ չէք տեսներ այն տեղ և չէք զարմանար Աստուծոյ խորհրդեան վերայ, որ կը թագաւորէ տիեզերաց մէջ: Բացատրեցիք մեզ ձեր միտքն, մի թողուք, որ կատկածիք եւ տարակուսիք ձեր միտաց ուղղութեան վերայ: Եթէ ձեր միտքն չը բացատրէք, միշտ պիտի աւտենք. «Այդ բանին կը նայիք, այդ բանին վերայ կը զարմանաք»: Մի տըխուր և մահապայտ խարոյի, մի խորհրդագաւոր գերեզման կը սպասուէ, կը լայլվի և կը կլանէ աստեղագիտաց աշխարհն, բնազիտաց աշխարհն, երկրագիտաց աշխարհն: Անդ, ուր տեղին է իսկական

էութեան, անդ, ուր աղբիւրն է ճրչմարտիս գոյութեան, անդ չը կայ բնաւ խնդիր շարժուն և փոփոխական երեւութից նկատմամբ: Ամենայն ինչ պիտի սպասի և միայն այն խորհուրդն պիտի մնայ, որ ծնաւ ձեր ամեն տեսածներն եւ ամենուն համար օրէնք սահմանեց: Եթէ այս խորհուրդն չ'էր ձեր տեսութեան եւ զննութեան առարկան, ուրեմն ի՞նչ բանի նայեցաք:

« Ոչ թէ տեսիլներուն և երեւոյթներուն նայեցանք, կ'ասէք դուք, այլ տիեզերաց օրէնքներուն, և ահա՛ իւրաքանչիւր օրէնք խորհուրդ և մտածութիւնն է արդէն ո՞: Մէք եւս այս կըստասէինք ձեզմէն: Ասացէք ուրեմն հաստատապէս, թէ ի՞նչ է Աստուծոյ խորհուրդն, ապա թէ ոչ, մենք պիտի ասենք՝ թէ ի՞նչ է ձեր խորհուրդն ու միայն, ձեր կորովութիւնն ու սրամտութիւնն, ձեր գիւտասէր ոգին, և թէ՛ հեանեապէս դուք միայն ձեզ նայած էք, այնպէս՝ որ բովանդակ բնութիւնն մի հայելի միայն եղած է ձեր մտաց ամբարտաւանութեան համար: Ի՞նչ նայելու արժանի առարկայ է այն իմաստութիւնն, որ չը կամիր զԱստուծոյ

խնդրել և փոստարանել: Ի՞նչ զարմացման արժանի նիւթ է այն մարդն, որ կատուած չէ Աստուծոյ հետ: Բայց կը սխալիմ ես. նայելու բաներ չասկան: Հրէշներն եւս հրաշքներէն պակաս իրաւունք չ'ունին, Կոնէ առ փայր մի, մեր զարհուրեաց նայուածքն գըրաւելու: Այսպէս ուրեմն, այս աշխարհին նայելէն եւ զԱստուծոյ այն տեղ չը տեսնէին զինի՛ նայեցէք և զննեցէք նոյն խոյն նայուածքն: Տիեզերաց հրաշալիքներէն պակաս արժանի չ'է նա ձեր ուշադրութեան: Տիեզերքն եւս կարող է նորան նայիլ: Արարչագործութիւնն, եթէ հոգի և ձայն ունենար, պիտի աղաղակ բառնար այս զարհուրելի սքանչելիքն տեսած ժամանակ: Բնութիւնն շատ սքանչելիքներ ունի. բայց սորա նմանն չ'ունի. քանզի բնութեան հրէշներն անգամ օրէնք մի ունին: Իսկ այն հրէշն, որուն վերայ կը խօսինք մենք, այն սուկալի հրէշ կամ հրաշալիքն է մարդն՝ առանց Աստուծոյ մարդն անաստուած, զոր ո՛չ մի օրէնք կարէ բացատրել:

(Շարունակելէ:)

ՀՐՈՎԱՐՏԱԿ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ

Մ Ե Մ Ա Շ Ո Ւ Ք Վ Է Զ Ի Ր Գ Ի Մ

Մ Ա Հ Մ Ո Ւ Տ Ն Ի Տ Ի Մ Փ Ը Շ Ը

Քաղաքակրթեալ Պետութեանց պարտքն է հասարակաց իրաւունքն ապահովելու նուիրել իրենց ջանքը: Այս սկզբան սրահայանութեանը, ծառայող միջոցներն ուրիշ բանով ձեռք չեն կրնար բերուիլ, բայց եթէ արդարութիւնն ամենուն համար ճշդիւ և անխտարար գործադրելով, և վարչու-

թիւնն սլ կանոնաւորապէս կազմաւորելով: Անհատական շահերն երկրին բարեկարգութեամբն ու բարգաւաճմամբը միայն կրնան ապահովիլ, զի մասնական շահերը սերտ կապակցութիւն ունին համրական շահոյց հետ: Ամենուն յայտնի է արդէն, թէ Մեր Քահակալութեանն Կ Վ Է Ր, Մ Ե Ր